# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2153-Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՆԼ ՊՌՈՊԵՌՏԻԵՍ» ՓԲԸ-ի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՆԼ ՊՌՈՊԵՌՏԻԵՍ» ՓԲԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 47 հասցեում գտնվող հողամասում հյուրանոցային համալիրի ինժեներական համակարգերի նախագծման համար:
2. «ՆԼ ՊՌՈՊԵՌՏԻԵՍ» ՓԲԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2154-Ա**

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Ծովագյուղ /05-049-0141-0283/ հասցեում գտնվող հողամասում ձկնաբուծական ջրավազանի կառուցման համար:
2. «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2155-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Հարությունյանի լիազոր անձ «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Խուդավերդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն թիվ 24 հասցեում՝ Արման Կարոյի Լուկասին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար :
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2156-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Հարությունյանի լիազոր անձ «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Խուդավերդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 18-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող, Սուսաննա Գալստյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար ։
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2157-Ա**

## «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ հարուցված վարույթի նյութերը պարզեցի՝ ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից կազմված N/147 արձանագրության համաձայն՝ «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում տեղադրվել է ինքնակամ ոչ հիմնական շինություն(տնակ) և կառուցվել է 20մ2 բետոնե հարթակ: Սևանի համայնքապետարանը նախնական փուլում ծանուցումներ է ուղարկել ՍՊԸ-ի տնօրեն Երևան քաղաքի Մաշտոցի փողոց 14 / 20 հասցեի բնակիչ Հարություն Առաքելյանին: Սակայն Հ. Առաքելյանը երբևէ չի ներկայացել Սևանի համայնքապետարան պարզաբանումներ տալու նպատակով: 2006թվականի դեկտեմբերի 12-ին Հ. Առաքելյանը հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր է կնքել «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2031թվականի դեկտեմբեր ամիսը: Հետագայում ուսումնասիրությունների արդյունքում հայտնի է դարձել «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-ի տնօրեն հանդիսանում է Սևան համայնքի Ծովագյուղ 16 / 22 հասցեի բնակիչ Նարեկ Սարգիսի Սարգսյանը: Քաղաքացի Նարեկ Սարգսյանը երբևէ չի ներկայացել համայնքապետարան և չի տվել պարզաբանումներ: Վարչական գործի քննման ժամկետը չխախտելու համար ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Վարչական մարմինը չի բացառել այն հանգամանքը, որ ՍՊԸ-ն կարող էր Ծովագյուղի համայնքապետարանից ստանալ շինարարության թույլտվություն սահմանված կարգով: Հետագա ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզվեց, որ ՍՊԸ-ի տնօրինությունը խախտել է ՀՀ կառավարության 2001թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումների, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները՝ առանց սահմանված կարգով թույլտվության հողատարածքում տեղադրելով կամ կառուցելով շինություններ: Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, **որոշում եմ.**

1. Պահանջել «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-ի տնօրենի ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Սարգսյանից ապամոնտաժելու(քանդելու) ոչ հիմնական շինությունը և բետոնյա հարթակը:
2. Պահանջել «ՋԱՆ ԳՈԿ ՔԵՄ» ՍՊԸ-ի տնօրենից տարածքի կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2158-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0148-0001 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 1.51192հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, խոտհարք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2159-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 12.07.2021Թ. N 554-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 12.07.2021թ. «Ինքնակամ կառուցված ավտոտնակը և պատն օրինականացնելու մասին» N 554-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում՝ «0.87քմ և 0.14քմ մակերեսով պատերը» բառերի փոխարեն կարդալ «0.14քմ և 0.6քմ մակերեսով պատերը» բառերը և «157.0քմ մակերեսով հողատարածքը» բառերի փոխարեն կարդալ «0.01623հա մակերեսով հողատարածքը» բառերը:

2) որոշման 2-րդ կետում՝ «Աբովյան փողոց թիվ 9 / 54 հասցե» բառերի փոխարեն կարդալ «Խ. Աբովյան փողոց թիվ 9 / 50 ավտոտնակ հասցե» բառերը:

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2160-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հրաչյա Մարգարյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0012-0005/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Վարսեր, 11-րդ փողոց թիվ 34 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2161-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արծրուն Սիմոնյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն համայնքում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1129907, տրված՝ 09.11.2003թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն համայնքում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 5-րդ փողոց, 5-րդ փակուղի թիվ 2 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2162-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0274-0001 կադաստրային ծածկագրով /գ. Գեղամավան/, 1.20000հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2163-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00203հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 23 / 66 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2164-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-047-0143-0001 կադաստրային ծածկագրով /գ. Ծաղկունք/, 0.13126հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2165-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով «ԶԵՆԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող «ԶԵՆԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից՝ Սևան համայնք, գ. Գեղամավան թիվ 6 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված արևային կայանի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2166-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Արսեն Մալխասյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Արսեն Մալխասյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Էներգետիկների փողոց թիվ 1 / 49 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված ավտոտնակի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2167-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող 1.4631հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 07062021-05-0035/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.43439հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում;

2) երկրորդ միավոր գույքի՝ 1.02870հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության վարելահող՝ գործառնական նշանակության:

2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2168-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով քաղ. Ռաֆիկ Ժամհարյանին պատկանող, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 5 / 10 հասցեում գտնվող 0.0028 հա մակերեսով, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 5 / 11 հասցեում գտնվող 0.0028 հա մակերեսով անշարժ գույքերի / վկայականներ՝ N05022025-05-0071, N 05062025-05-0042/ գծային չափերը և երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց փողոթց թիվ 5 / 10 և ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 5 / 11 հասցեներում գտնվող անշարժ գույքերի գծային չափերը, երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2169-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Լեռնիկ Ղազարյանի լիազոր անձ Տիգրան Ղազարյանի դիմումը՝ անհատույց սեփականության իրավունքով Լեռնիկ Ղազարյանին հատկացված, ք. Սևան, Նոր թաղ թաղամասից արևելք ընկած հասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0027-0118/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նոր թաղ թաղամասից արևելք ընկած հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ամառանոցային փողոց, 3-րդ նրբանցք թիվ 7 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2170-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արևիկ Նաջարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոց, թիվ 29 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 14012015-05-0026/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 29 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 31 / 1 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2171-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի բ) և գ) ենթակետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Արմեն Ղուկասյանի /Վ. Գետաշեն. Բ թաղ., 3-րդ փողոց թիվ 19 տուն հասցե/ նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2172-Ա**

## «ԴԱՎԻԹ - ՄԱՐՏԻՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «ԴԱՎԻԹ-ՄԱՐՏԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հակահրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությամբ տեղեկացվում է, որ ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում իրականացվել են երկու ծածկարանների տեղադրման (կառուցման) աշխատանքներ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ հողատարածքը պատկանում է «ԴԱՎԻԹ - ՄԱՐՏԻՆ» ՍՊԸ-ին: ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում Հովհաննես Մինասի Սարգսյանը: Վարչական գործի հանգամանքների ամբողջովին բացահայտման համար անհրաժեշտ էր ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստանալ պարզաբանումներ: Այդ կապակցությամբ 2025թվականի օգոստոսի 21-ին համայնքապետի որոշմամբ վարչական վարույթը կասեցվեց մինչև կասեցման հիմք դարձած հանգամանքների պարզաբանումը: 2025 թվականի սեպտեմբերի 25-ին Հ. Սարգսյանը ներկայացրեց դիմում – պարզաբանում՝ ուղղված Սևանի համայնքի ղեկավարին: Ըստ պարզաբանումների՝ հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիրը կնքվելու պահին հողատարածքում արդեն առկա էին շինություններ և, ՍՊԸ–ի տնօրեն է հանդիսացել Մ. Սարգսյանը: Հ. Սարգսյանի կողմից ներկայացվեց N ՎԴ2/0034/05/09 դատական գործը՝ Գեղարքունիքի մարզպետարանն ընդդեմ ՍՊԸ-ի տնօրեն Մ. Սարգսյանի: Համաձայն դատավճռի՝ քաղաքացի Լեռ Գրիգորյանը, համաձայն Ծովագյուղի համայնքի ղեկավարի կողմից հաստատված և համայնքի կնիքով ամրագրված 2009թ. փետրվարի 27-ին հայտարարության, իրեն պատկանող շինությունները նվիրել է «ԴԱՎԻԹ - ՄԱՐՏԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մարտիրոս Սարգսյանին: Խոսքը վերաբերվում է 2 հիմնական շինություններին և 7 ոչ հիմնական շինություններին: Քաղաքացի Լեռ Գրիգորյանի կողմից շինարարությունները իրականացվել են 1995-1996թ. ընթացքում, իսկ հողատարածքը իրեն և օգտագործվել է Գեղարքունիքի մարզպետարանի համաձայնությամբ: Ի վերջո, դատարանի վճռով ինքնակամ կառույցները քանդելու և վարչական տուգանքի գումարը հօգուտ պետական բյուջեի բռնագանձելու մասին պահանջները մերժվել են: Բայց, միաժամանակ, փաստվում է, որ նախկինում կառուցված շինություններում առկա են հիմնական շինության (քարից պատեր) տարրեր: ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Սարգսյանի պարզաբանմամբ՝ արձանագրված երկու ոչ հիմնական ծածկարաններն իր կողմից վերանորոգվել են: Դրանք տեղադրված են եղել մինչև 2009թվականը: Փաստորեն, խախտվել են ՀՀ կառավարության 24.09.2001թվականի 896-Ն որոշման, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները: Համաձայն ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 8-րդ հոդվածի պահանջներիև գործող

օրենսդրության՝ իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում: Վարչական պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ դրանք տարածվում են նաև այդ ակտերի հրապարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ և ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի ՀՕ-438-Ն օրենքի 154-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «ԴԱՎԻԹ - ՄԱՐՏԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Սարգսյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք երկու հարյուր հազար դրամ չափով:
2. Պահանջել ՍՊԸ-ի տնօրենից՝ ապամոնտաժելու երկու ծածկարանները :
3. Վարչական տուգանքի գումարը վճարել 15 օրյա ժամկետում Սևան համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում՝ հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2173-Ա**

### ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

